

## ԱՐԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ

Ծնվել է 1955թ. նոյեմբերի 5-ին Երևանում:

1963-1973թթ. սովորել է Պուլշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում:

1973-1979թթ. սովորել է Երևանի Մխիթար Զերացու անվան պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետում:

1979-1980թթ. աշխատել է Երևանի թիվ 1 հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում որպես բժիշկ-ինտերն:

1980-1982թթ. աշխատել է Ախուրյանի շրջանային հիվանդանոցում որպես գլխավոր բժշկի տեղակալ, վիրաբույժ:

1982-1989թթ. աշխատել է Էջմիածնի շրջանային հիվանդանոցի գլխավոր բժշկի բուժ. գծով տեղակալ, վիրաբույժ:

1989-1991թթ. եղել է Երևանի քաղաքային խորհրդի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ:

1991-2004թթ. եղել է «Շտապ օգնություն» գիտաբժշկական կենտրոնի տնօրենը:

1998-1999թթ.՝ Երևանի քաղաքապետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետը (համատեղ):

2004 թվականից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի տնօրենն է («Շտապ օգնություն» գիտաբժշկական կենտրոնը վերանվանվել է օպտիմալացումից հետո):

1986թ. Մոսկվայի Սեմաշկոյի անվան բժշկական ստոմատոլոգիայի ինստիտուտի «Մոսկվայի N3 բժշկական ինստիտուտ» մասնագիտացված բժշկական խորհրդում պաշտպանել է թեկնածուական թեզ, ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան:

1992թ. «Շտապ օգնության և առողջապահության կազմակերպում» մասնագիտությամբ վերապատրաստվել է Նյու Յորքի Կոլումբիայի, իսկ 1994թ.՝ Բոստոնի համալսարանում:

1995թ. ԶՆ ԱՆ սրտաբանության մասնագիտացված խորհրդի հիմքի վրա կազմակերպված խորհրդում պաշտպանել է դոկտորական թեզ, ստացել բժշկական գիտությունների դոկտորի աստիճան: Նույն թվականին ընտրվել է ԶՆ ԱՆ ազգային ինստիտուտի Շտապ օգնության և աղետների բժշկության ամբիոնի վարիչ:

1996թ. ԶՆ ԱՆ ԱԱԻ-ի գիտական խորհրդի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Մասնակցել և գիտական գործունեությամբ հանդես է եկել տարբեր միջազգային կոնֆերանսներում: Եղել է բժշկական գիտությունների դոկտորի 2 և բժշկական գիտությունների թեկնածուի կոչման համար ներկայացված 5 ատենախոսությունների գիտական ղեկավար և ընդդիմախոս: 110 գիտական աշխատությունների հեղինակ և համահեղինակ է, 2 մեթոդական ձեռնարկների հեղինակ է, նախագահել է 2 խմբագրական խորհրդում:

Շնորհվել է Մխիթար Զերացու անվան շքանշան, Զայրենիքին մատուցած ծառայությունների համար 2-րդ կարգի շքանշան, ԶՆ ոստիկանության մեդալ, ԶՆ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» մեդալ, Նանսենի անվան շքանշան, Երևանի քաղաքապետարանի, ԱՆ (2002, 2007թթ.) Ազատամարտի վետերանների միության պատվոգրեր:

Ամուսնացած է, ունի երկու զավակ և մեկ թոռ:

